հանուր կոտորածներու ու յափշտակութիւններու դրութիւնը, ու սկսեցին գործադրել արհեստական մահացումները, ճանապարհորդութեանց ընդհատումն, յարաբերութեանց խզումն, մշակութեանց և առևտուրի դադար, երկրագործութեան նուազումն եւայլն, տիրեց անմիջապէս ընդհանրական աղքատութիւն՝ որմէ առաջ եկաւ տնտեսական շերտաւորումն նաև Քրդերու մէջ։ Ցեղապետներ, Բէգեր և Բայներ (քիւրդ), բաժան բաժան եղան իրենց շահերով. առաջինները սկսեցին հարստահարել վերջինը, ու Քիւրդ Բայն կրաւորական հնազանդութեամբ լուծը անտանելի գտնելով ոչ թէ սկսաւ բողոքի ու դիմադրութեան, որովհետև գիտակցութիւնը չունէր ու իրերու վիճակը կը գտնէր բնական ու սովորական, սկսաւ գաղթել։

Քիւրդ գաղթականութիւնը եթէ պատմականապէս առնենք իրենց հայրենի բնավայրէն նախ լեռնէրը, ու ապա Տիգրիսի ափերով Հայկական աշխարհները. Ռուսաստանի, Պարսկաստանի և Թիւրքիայի ամբողջ սահմաններու վրայ. ու յետոյ Կ. Պոլիս, Կիլիկիա, Ամերիկա մաւ։

Քիւրդ գաղթականութիւնը դարձեալ կ'ապրի այդ դուրսի աշխարհները՝ բնակարութեամբ, երկրագործութեամբ և գործարանական բանուորութեամբ։

Մինչև բռնապետական ռէժիմի վերջը Թիւրքիայի մէջ, գաղթական քրդերը գործածուեցան նաև Կ. Պոլիս ու Կիլիկիա իբր սպանիչներ ու յափշտակիչներ, բայց երևոյթը տարբեր կերպարանք ստացաւ Սահմանադրութենէն յետոյ. ընդհանուր գործադուլներու բաժնէն մէջ՝ տեղ տեղ Քիւրդ գործաւորներն ալ կազմակերպուեցան իրենց տնտեսական տէրերի ճնշումներու դէմ ու պահանջներ դրին, կամ դրուած պահանջներու մասնակցեցան. Ամերիկայի մէջ Քրդերը համերաշխ գործունէութեամբ կ'երթան հայերու հետ ու անոնց հետևողութեամբ, որովհետև Ամերիկեան իշխանութիւնները անկարելի կը դարձնեն Քրդական արարքները Ամերիկայի մէջ, ինչոր սովորական և բնական կը համարուի ի Թիւրքիա։

Պէտք է յիշատակել որ շատ մը Քիւրդ բէգեր ու փաշա-